ՍՄԿԿ XXV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Կ. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXV համագումարը բազմակողմանիորեն քննարկեց իններորդ հնգամյակի արդյունքները, օբյեկտիվորեն վերլուծեց իրերի վիճակը և նշեց ապագա անելիքների ծրագրերը։ Համագումարը նոր բնագծեր առաջադրեց սոցիալիստական հասարակական կյանքի կատարելագործման ուղղությամբ, կոնկրետ խնդիրներ սովետական պետության արտաքին քաղաքականության բնագավառում, խաղաղության և միջազգային համագործակցության համար մղվող պայքարում։ Լայն ու բազմազան է դարձել ՍՄԿԿ գործունեությունը միջազգային ասպարեզում։ Սակայն կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության ուշադրության կենտրոնում եղել և մնում են սոցիալիստական պետությունների հետ ունեցած փոխհարաբերությունները։ Անցած հինգ տարիների փորձը մեկ անգամ ևս հաստատեց, որ «յուրաքանչյուր սոցիալիստական ազգի ծաղկման, սոցիալիստական պետությունների սուվերենության ամրապնդման հետ մեկտեղ սվելի ու ավելի են սերտանում նրանց փոխադարձ կապերը»[1] և նրանց մերձեցման պրոցեսը դրսևորվում է որպես օրինաչափություն։

Սոցիալիստական ինտերնացիոնալիզմի, իրավահավասարության և ընկերական համագործակցության սկզբունքների ուժով, համերաշխության ու փոխադարձ աջակցության շնորհիվ անցած հնգամյակում սոցիալիզմի երկրներին հաջողվել է լուծել տնտեսական ու քաղաքական մի շարք կարևորագույն կենսական խնդիրներ, որոնց իրականացման ուղղությամբ հատկապես մեծ աշխատանք են կատարել Վարշավայի պայմանագրի կազմակերպությունն ու Տնտեսական փոխօգնության խորհուրդը (ՏՓԽ)։

Սոցիալիստական համագործակցության երկրների կոմունիստական կուսակցությունների և կառավարությունների քաղաքական համագործակցության կարևոր ձևերից է Վարշավայի պայմանագրի քաղաքական կոնսուլտատիվ կոմիտեն, որի նախաձեռնություններից շատերը գրվել են միջազգային կարևոր իրադարձությունների հիմքում։ Բավական է հիշատակել թեկուզ Եվրոպայի անվտանգության ու համագործակցության բազմաստիճան խորհրդակցությունն ու նրա եզրափակիչ ակտը։

Գնալով մեծանում է սոցիալիստական երկրների դերը համաշխարհային էկոնոմիկայի զարգացման գործում։ Սոցիալիստական համագործակցությունը դարձել է աշխարհի «ամենադինամիկ տնտեսական ուժը»։ Մեծացել է սոցիալիստական համագործակցության երկրների արդյունաբերական արտադրանքի

---

[1] Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում. Երևան, 1976, էջ 8։

թողարկումը։ Անցած հինգ տարում սոցիալիստական համագործակցության երկրների ինդուստրիան չորս անգամ ավելի արագ է զարգացել, քան զարգացած կապիտալիստական պետությունների արդյունաբերությունը։

Սոցիալիստական երկրների տնտեսական համագործակցության բնագավառում Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը հատկապես կարևոր են համարում ՍՍՀՄ և Տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ մյուս երկրների կողմից 1971 թ. համատեղ ընդունված սոցիալիստական տնտեսական ինտեգրացման երկարաժամկետ ծրագիրը։

ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը դեռևս 1971 թ. կուսակցության XXIV համագումարում նշել է, որ «պրակտիկան մեզ հանդեցրել է այն ընդհանուր հետևության, որ անհրաժեշտ է խորացնել արտադրության մասնագիտացումն ու կոոպերացումը, էլ ավելի սերտորեն համաձայնեցնել ժողովրդատնտեսական պլանները, մի խոսքով՝ առաջ ընթանալ սոցիալիստական տնտեսական ինտեգրացման ուղիով»[2]։

Եվ իսկապես, ՏՓԽ-ի անդամ պետությունների տնտեսական ինտեգրացիան անցած հինգ տարիների ընթացքում մեծ առաջընթաց ապրեց։ Մեծացավ ինչպես մեկ առանձին սոցիալիստական պետության, այնպես էլ ամբողջ սոցիալիստական համագործակցության տնտեսական պոտենցիալը, համաշխարհային էկոնոմիկայի մեջ ամրապնդվեց սոցիալիստական պետությունների ընդհանուր դիրքը։ ՏՓԽ-ի անդամ երկրների ազգային եկամուտը միասին վերցրած անցած հնգամյակի առաջին չորս տարիներին մեծացավ ավելի քան 29 տոկոսով։ Դրանում վճռական դեր խաղաց հատկապես արդյունաբերությունը, որի համախառն արտադրանքը աճեց մոտավորապես 35 տոկոսով։ Նշված հաջողությունները, որ ձեռք են բերվել գլխավորապես աշխատանքի հասարակական արտադրողականության աճի և սոցիալիստական արդյունաբերության տնտեսական էֆեկտիվության բարձրացման հաշվին, նպաստում են իրականացնելու սոցիալիստական հասարակարգի սոցիալ-տնտեսական զարգացման ընդարձակ ծրագիրը։ Սոցիալիստական համագործակցության երկրների էկոնոմիկայի զարգացման մեջ նոր հաջողություններ ձեռք բերվեցին հատկապես 1974 թ., երբ ՏՓԽ-ի անդամ երկրների ազգային եկամուտը աճեց 6,4 տոկոսով, իսկ արդյունաբերության համախառն արտադրանքը՝ մոտ 8,5 տոկոսով։

Այդ նույն ժամանակաշրջանում շարունակվել և շարունակվում է խորանալ կապիտալիստական երկրների տնտեսական ճգնաժամը։ Չնայած Եվրոպայի «ընդհանուր շուկայի» անդամ երկրների կողմից ձեռնարկված բազմաթիվ միջոցառումներին, այնուամենայնիվ, ծանր ճգնաժամը ցնցում է կապիտալիզմի տնտեսության հիմքերը։

Համաձայն Եվրոպական տնտեսական միավորման (ԵՏՄ) հանձնաժողովի տվյալների, «ընդհանուր շուկայի» արդյունաբերական արտադրանքը աճել է ընդամենը 1 տոկոսով (ի դեպ, ԳՖՀ-ում այն ընդհանրապես չի աճել, իսկ Անգլիայում նույնիսկ կրճատվել է 3 տոկոսով)։

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի քարտուղարությունը 1976 թ. մարտի 15-ին հրապարակեց ամփոփագիր, որտեղ մասնավորապես

---

2 «ՍՄԿԿ 24-րդ համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 11։

նշված է, որ կապիտալիստական երկրները 1975 թ. եզրափակել են արտադրության անկումով, ինֆլյացիայով, գործազրկությամբ ու կյանքի պայմանների ընդհանուր թանկացումով։ Այդ նույն փաստաթղթում ասված է, որ Եվրոպայի զարգացած կապիտալիստական երկրներում ազգային համախառն արտադրանքի ծավալը 1975 թ. պակասել է 3 տոկոսով, արդյունաբերական արտադրանքինը՝ 10 տոկոսով։ Նման տենդենց շարունակվում է պահպանվել նաև ընթացիկ տարում։ Բավական է նշել, որ «ընդհանուր շուկայի» անդամ երկրներում գործազուրկների թիվը 4 միլիոնից ավելի է։

Տնտեսական շինարարության բնագավառում սոցիալիստական երկրների հաջողությունները պայմանավորված են այդ երկրների ժողովուրդների անձնվեր աշխատանքով, կառավարող մարքս-լենինյան կուսակցությունների ամրապնդվող միասնությամբ ու համախմբվածությամբ, սոցիալիստական տնտեսական ինտեգրացիայի զարգացմամբ ու համագործակցության կատարելագործմամբ։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը այժմ դարձել է այն ուժը, որը երաշխավորում է ինչպես յուրաքանչյուր առանձին սոցիալիստական պետության, այնպես էլ ողջ մարդկության պրոգրեսիվ զարգացումը։

Սմբողջությամբ վերցրած սոցիալիստական երկրների և նրանց կուսակցությունների հարաբերություններին բնորոշ են լիակատար միասնությունն ու բեղմնավոր համագործակցությունը։

Սոցիալիստական համագործակցության երկրների հետ ունեցած հարաբերություններում ՍՄԿԿ-ն ղեկավարվում է մարքսիզմ-լենինիզմի, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի, պետությունների իրավահավասարության, նրանց ներքին գործերին չմիջամտելու և պետական սուվերենության հարգման սկզբունքներով։ Այդ սկզբունքներն են ընկած ՏՓԽ-ի անդամ երկրների կողմից 1971 թ. համատեղ ընդունված սոցիալիստական տնտեսական ինտեգրացման կոմպլեքսային ծրագրի հիմքում։ Այդ ծրագիրը կոչված է սոցիալիստական երկրների համագործակցությունը հասցնելու «շատ ավելի բարձր աստիճանի, քան պարզապես առևտրի զարգացումն է»։ Ի դեպ, ինչպես նշված է ՍՄԿԿ XXV համագումարում ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի զեկուցման մեջ, լավ տեմպերով է աճում առևտուրը ՍՍՀՄ և ՏՓԽ-ի անդամ մյուս երկրների միջև։ Հինգ տարում ՏՓԽ-ի երկրների հետ մեր ապրանքաշրջանառությունը ավելի քան կրկնապատկվել է։ Այժմ այն կազմում է մի պատկառելի գումար՝ տարեկան 26 միլիարդ ռուբլի[3]։

Անցյալ հնգամյակում տնտեսական ինտեգրացիայի զարգացման ուղղությամբ սոցիալիստական համագործակցության երկրների ձեռք բերած հաջողությունները լայնորեն օգտագործվում են այնպիսի հիմնական պրոբլեմների իրականացման բնագավառում, ինչպիսիք են՝ էներգետիկան, սև և գունավոր մետալուրգիան, մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, լայն սպառման առարկաների արտադրությունը, գյուղատնտեսական մթերքների արտադրությունը և այլն։ Նշված և նման այլ պրոբլեմների անշեղ իրականացումը մեծ չափով կախված է սոցիալիստական տնտեսական ինտեգրացիայի կոմպլեքս ծրագրի և ՏՓԽ-ի սեսիայի 29-րդ նստաշրջանի կողմից

3 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 13—14։

1975 թ. հունիսին ընդունված բազմակողմ ինտեգրացիոն միջոցառումների համաձայնեցված պլանի հաջող կատարումից։

Սոցիալիստական տնտեսական ինտեգրացման 20-ամյա կոմպլեքսային ծրագիրը և բազմակողմ ինտեգրացիոն միջոցառումների 1976—1980 թթ. համաձայնեցված պլանը գնալով ավելի մեծ նշանակություն են ստանում ՏՓԽ-ի անդամ երկրների համագործակցության համար։

ՍՄԿԿ XXV համագումարին տված հաշվետու զեկուցման մեջ, խոսելով սոցիալիստական տնտեսական ինտեգրացման կոմպլեքսային ծրագրի կարևորության մասին, Լ. Ի. Բրեժնևը նշում է, որ այդ «ծրագիրը նշանակում է, օրինակ, բնական ռեսուրսների համատեղ յուրացում ընդհանուր օգտի համար, նրա բոլոր մասնակիցների կարիքների բավարարման նպատակին ուղղված արդյունաբերական խոշոր կոմպլեքսների համատեղ շինարարություն, մեր երկրների ձեռնարկությունների և արդյունաբերության ամբողջ ճյուղերի՝ շատ տարիների համար պլանավորված կոոպերացում»[4]։

Եվ իսկապես. ՍՍՀՄ-ում կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի հետագա կառուցման և այդ ուղղությամբ կուսակցության տնտեսական ու սոցիալական քաղաքականության մշակման նպատակով ՍՄԿԿ XXV համագումարի քննարկմանը ներկայացված «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները» կուսակցության Կենտկոմի նախագիծը դրա նոր հաստատումն է։

Ինչպես նշեց ՍՄԿԿ XXV համագումարին տված զեկուցման մեջ ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինը, «հիմնական ուղղությունների նախագծում շարադրված է նյութական արտադրության հետագա զարգացման, նրա կառուցվածքի կատարելագործման, արտադրանքի որակի և տեխնիկական մակարդակի բարձրացման ծրագիրը»[5]։ Այդ ամենը իր հերթին կնպաստի սոցիալիստական երկրների հետ ՍՍՀՄ համագործակցության զարգացմանը, եղբայրական բոլոր երկրների արդյունաբերության ու ժողովրդական տնտեսության առանձին բնագավառների կոոպերացման ու մասնագիտացման ընդլայնմանը։

Հիմնական ուղղությունների մեջ նշվում է, որ տասներորդ հնգամյակի բնորոշ գիծը կլինի մեր ժողովրդական տնտեսության է՛լ ավելի խոր ներգրավումը աշխատանքի միջազգային բաժանման մեջ, բոլոր երկրների հետ արտաքին տնտեսական կապերի ընդլայնումը, մասնավորապես սոցիալիստական երկրների հետ համագործակցության զարգացումն ու ամրապնդումը։ Այս և նման մյուս խնդիրներն իրականացնելու համար սովետական էկոնոմիկան ունի բոլոր հնարավորությունները։ Տասներորդ հնգամյակում ազգային եկամուտը ՍՍՀՄ-ում աճելու է 24—28 տոկոսով, արդյունաբերության արտադրանքը՝ 35—39 տոկոսով, գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ 14—17 տոկոսով, ժողովրդական սպառման ապրանքների արտադրանքը՝ 30—32 տոկոսով։

X հնգամյակում սովետական ժողովրդի այս խոշոր նվաճումները կնպաստեն ՏՓԽ-ի սեսիայի 1975 թ. հերթական նստաշրջանում ընդունված բազմա-

---

4 Նույն տեղում, էջ 13։

5 «Սովետական Հայաստան», 2 մարտի, 1976։

կողմ ինտեգրացիոն միջոցառումների համաձայնեցված պլանի իրականացմանը։

ՏՓԽ-ի անդամ երկրների ժողովրդական տնտեսությունների 1976—1980 թթ. պլանների կոորդինացման նշանակությունը ձեռք է բերում նոր, կարևոր նշանակություն, քանի որ այն ընդունվել է սոցիալիստական տնտեսական ինտեգրացման կոմպլեքսային ծրագրի առկայության պայմաններում և նրա հետ կապված միջոցառումները կոմպլեքսային բնույթ են կրում։ Այդ միջոցառումները սերտորեն կապված են ՏՓԽ-ի անդամ յուրաքանչյուր պետության ներքին տնտեսական ու քաղաքական կյանքի բոլոր օղակների հետ և, վերջին հաշվով, պայմանավորված են առանձին սոցիալիստական երկրների ընդհանուր առաջընթացով։ Աշխատանքի միջազգային բաժանմանը յուրաքանչյուր սոցիալիստական պետության մասնակցությունը պայմանավորված է ինչպես տվյալ երկրի արտաքին տնտեսական կապերի զարգացման աստիճանով, այնպես էլ նրա ներքին տնտեսական ու սոցիալական խնդիրների հաջող լուծմամբ։

Այս տեսակետից սոցիալիստական տնտեսական ինտեգրացման կոմպլեքսային ծրագրի մասնակից երկրների համար շատ տիպիկ և ուսանելի է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության օրինակը։

Զարգացած սոցիալիստական հասարակարգի պայմաններում տնտեսական քաղաքականության արմատական հարցերի վերաբերյալ սկզբունքային դրույթներ է մշակել դեռևս ՍՄԿԿ XXIV համագումարը։ Այդ դրույթները բխել են մեր ժողովրդական տնտեսության զարգացման տվյալ փուլի առանձնահատկություններից։ XXIV համագումարը կոնկրետ նշել է այդ առանձնահատկություններից առավել կարևորները։ Դրանք են՝

1. Ժողովրդական տնտեսության միանգամայն նոր մասշտաբներ, այսինքն՝ բազմաճյուղ ինդուստրիայի և սոցիալիստական խոշոր գյուղատնտեսության հիման վրա ստեղծված տնտեսական վիթխարի հզորություն։

2. Ժողովրդական տնտեսության վիթխարի աճից բխող պրոբլեմային խնդիրների լուծման համար անհրաժեշտ հնարավորությունների զգալի մեծացում։

3. Տնտեսական հնարավորություններին զուգահեռ հասարակության կողմից էկոնոմիկային ներկայացվող արագորեն աճող պահանջներ։

4. Սովետական մարդկանց բարեկեցության բարձրացման խնդիրների լուծման համար ավելի ու ավելի շատ միջոցների կենտրոնացում։

5. Պլանավորման, կառավարման, տնտեսական աշխատանքի մեթոդների նկատմամբ աճող պահանջների բավարարման համար հեռանկարային պլանավորման, միջճյուղային կապերի սիստեմի կատարելագործման, նյութական մատակարարման բարելավման նշանակության մեծացում։

6. Հասարակական կյանքում արագորեն ծավալվող գիտատեխնիկական հեղափոխության պահանջներին համապատասխան տնտեսական գործունեության բազմակողմ կատարելագործում։

7. Արտաքին պայմանների, առաջին հերթին՝ սոցիալիստական երկրների տնտեսական ինտեգրացման պրոցեսի և Սովետական Միության տնտեսական բազմաթիվ խնդիրների լուծման փոխադարձ կապ։

«Եթե այս բոլորը թարգմանենք քաղաքական խնդիրների լեզվով,— ասում է Լ. Ի. Բրեժնևը,— ապա շատ սեղմ ձևով կարելի է այսպես ասել. «Ժողովրդա-

կան տնտեսության հսկայական մասշտաբները, աճած տնտեսական հնարավորությունները և հասարակական պահանջմունքները անհրաժեշտ են դարձնում լրջորեն բարձրացնել մեր ամբողջ տնտեսական աշխատանքի մակարդակը, էապես բարձրացնել էկոնոմիկայի արդյունավետությունը, մեր ողջ վիթխարի տնտեսությունը վերածել է՛լ ավելի լավ աշխատող, լավ կարգավորված մեխանիզմի»[6]։

Նշված առանձնահատկություններից բխող դրույթները ՍՄԿԿ XXV համագումարը ավելի կոնկրետացրեց տասներորդ հնգամյակի և էլ ավելի տևական հեռանկարի համար։ XXIV համագումարի որոշումներին համապատասխան, ժողովրդական տնտեսության զարգացման X հնգամյա պլանը նախապատրաստվել է մեր երկրի էկոնոմիկայի հեռանկարային՝ մինչև 1990 թ. զարգացման ելակետային դրույթների մշակման հետ միաժամանակ։

Տասնհինգ տարվա հեռանկարային կողմնորոշիչ պլանները նպատակ ունեն նախօրոք որոշելու մեր երկրի համար շատ կարևոր խնդիրների բնույթն ու մասշտաբները։ Օրինակ՝ նախնական հաշվարկներով 1976—1990 թթ. մեր երկիրը, անցած 15 տարիների համեմատ, կկրկնապատկի նյութական ու ֆինանսական ռեսուրսների ծավալը։ Նոր հնարավորություններ են ստեղծվելու մեր երկրի հիմնական սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար։ Բարձրանալու է սովետական մարդկանց բարեկեցությունը, կատարելագործվելու է սոցիալիստական ապրելակերպը։

Կոմունիստական կուսակցության տնտեսական ստրատեգիայի գերագույն նպատակն է սովետական ժողովրդի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացումը։ Իսկ դրա համար հարկավոր է ապահովել նախ և առաջ այդ տնտեսական ստրատեգիայի անշեղ իրականացումը, այսինքն՝ հասնել թե՛ տասներորդ հնգամյակի և թե՛ տևական հեռանկարային պլանի կատարմանն ու գերակատարմանը։ Սովետական մարդկանց առաջնային խնդիրը պետք է լինի՝ մեր երկրի տնտեսական հզորության հետագա մեծացումը, արտադրական ֆոնդերի ընդլայնումն ու արմատական նորացումը, էկոնոմիկայի հիմքի՝ ծանր արդյունաբերության կայուն հաշվեկշռված աճի ապահովումը։

Սոցիալիստական տնտեսական ինտեգրացման պրոցեսի անխափան առաջընթացին նպաստող սոցիալ-տնտեսական միջոցառումների շարքում առանձնապես կարևոր դեր ունեն խաղալու այնպիսի խոշոր կոմպլեքսային ծրագրերի մշակումը, ինչպիսին է, օրինակ, վառելիքաէներգետիկ կոմպլեքսի, մետալուրգիայի, մեքենաշինության առաջատար ճյուղերի զարգացման ծրագիրը, որը մշակվեց ՍՄԿԿ XXV համագումարի կողմից։ Անշուշտ, նման ծրագրերի ցանկը կհամալրի գիտատեխնիկական առաջընթացի և նրա սոցիալ-տնտեսական հետևանքների 1971—1990 թթ. կոմպլեքսային ծրագիրը, որի նախագիծը ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ կառավարության հանձնարարությամբ նախապատրաստել են գիտահետազոտական ինստիտուտները՝ մինիստրությունների ու գերատեսչությունների հետ համատեղ։ Այդ ծրագրով, փաստորեն, մեր երկրում իրականացվելու է գիտության ու արտադրության ինտեգրացիան, որը մեծ թափ կհաղորդի սոցիալիստական երկրների տնտեսական միաձնական ինտեգրացման պրոցեսին։

---

6 «ՍՄԿԿ 24-րդ համագումարի նյութերը», էջ 52։

Վերևում ասվեց, որ մասնակցությունը աշխատանքի միջազգային բաժանմանը պայմանավորված է նաև տվյալ պետության արտաքին տնտեսական կապերի զարգացման աստիճանով։ Ինչպես նշեց ՍՄԿԿ XXV համագումարը[7], Սովետական Միության տնտեսական պրոբլեմների թվում հետզհետև մեծ նշանակություն է ստանում արտաքին տնտեսական կապերի զարգացումը, որն արդյունք է, նախ և առաջ, մեր ժողովրդական տնտեսության արագ աճի։ Սովետական Միության արտաքին տնտեսական կապերը սոցիալիզմի երկրների, զարգացող (կամ «երրորդ աշխարհի») երկրների և զարգացած կապիտալիստական պետությունների հետ նպաստում են պետությունների միջև գոյություն ունեցող թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական խնդիրների լուծմանը։

Սոցիալիստական երկրների հետ մեր արտաքին տնտեսական կապերը նպատակ ունեն տնտեսական ինտեգրացման ճանապարհով ամրապնդելու սոցիալիզմի երկրների համագործակցության հզորությունն ու համախմբվածությունը։

Զարգացող երկրների հետ արտաքին տնտեսական կապերը և, ընդհանրապես, համագործակցությունը հեշտացնում է նրանց ազգային էկոնոմիկայի և հասարակական կյանքի կազմակերպումն ու զարգացումը՝ առաջադիմական հիմունքներով։

Կապիտալիստական պետությունների, մասնավորապես զարգացած կապիտալիստական երկրների հետ մեր երկրի տնտեսական ու գիտատեխնիկական կապերը նպաստում են խաղաղ գոյակցության քաղաքականության նյութական բազայի ամրապնդմանն ու ընդլայնմանը։

Պետությունների արտաքին տնտեսական հարաբերություններում ժամանակակից պայմաններում ձևավորվել են ավելի լայն մասշտաբի, ողջ մարդկության շահերը շոշափող պրոբլեմներ։ Արդեն այսօր, ինչպես նշված է ՍՄԿԿ XXV համագումարի որոշումներում, բավականաչափ կարևոր ու հրատապ են այնպիսի համապարփակ պրոբլեմներ, ինչպիսիք են՝ հումքի կամ էներգետիկայի պրոբլեմը, առավել վտանգավոր ու տարածված հիվանդությունների վերացումը, շրջակա միջավայրի պահպանությունը, տիեզերքի յուրացումը, հեռամաշխարհային օվկիանոսի ռեսուրսների օգտագործումը։ Այս պրոբլեմները արդեն իսկ օրակարգի հարց են դարձել միջազգային կյանքում և հեռանկարային առումով մեծ ազդեցություն կունենան միջազգային հարաբերությունների ամբողջ սիստեմի վրա։ Ուստի Սովետական Միությունը և սոցիալիստական ողջ սիստեմը չեն կարող իրենց ակտիվ մասնակցությունը չունենալ համայն մարդկության շահերը շոշափող այդ կարևոր պրոբլեմների լուծմանը։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը, իրենց ազդեցության կենտրոնում միշտ ունենալով արտաքին տնտեսական կապերի զարգացման ու ամրապնդման քաղաքական ու տնտեսական վերոհիշյալ շահերը, ջանքեր չեն խնայել ավելացնելու մեր պետության արտաքին առևտրական շրջանառությունը։ Դրա փայլուն վկայությունն են իններորդ հնգամյակում այդ բնագավառում ձեռք բերված հաջողությունները։ Սովետական Միության արտաքին առևտրի ծավալը 1970 թ. 22 միլիարդ ռուբլուց 1975 թ. հասել է 51 միլիարդի։ «Արտաքին տնտեսական կապերում ի մի են ձուլվում քաղաքականությունն ու տնտեսությունը, դիվա-

7 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 91։

նադիտությունն ու կոմերցիան, արդյունաբերական արտադրությունը և առևտուրը։ Հետևաբար դրանց նկատմամբ մոտեցումը, դրանց կառավարումը պետք է լինեն կոմպլեքսային, որոնք միասնական հանդույցի մեջ միավորեն բոլոր գերատեսչությունների ջանքերը, մեր քաղաքական ու տնտեսական շահերը»[8]։

Այդ հարցի կարևորությունը ավելի է ընդգծվում XXV համագումարին ներկայացվող «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմնական ուղղությունները»՝ ՍՄԿԿ Կենտկոմի նախագծում սահմանված տասներորդ հնգամյակի խնդիրների իրականացման գործում։ Տասներորդ հնգամյակը, նշում է իր զեկուցման մեջ ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինը, նոր փուլ է սոցիալ-տնտեսական զարգացման, ծավալվող գիտատեխնիկական հեղաշրջման պայմաններում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման ասպարեզում կուսակցության երկարաժամկետ կուրսի իրականացման մեջ։ Այդ նպատակին հասնելու՝ տասներորդ հնգամյակը հաջող ավարտելու համար անհրաժեշտ կլինի բազմաթիվ կարևորագույն ժողովրդատնտեսական պրոբլեմներ լուծել ընդհանուր, միացյալ ջանքերով՝ համագործակցության տևական նպատակային ծրագրի հիման վրա, որոնց մշակմանը ձեռնամուխ պետք է լինեն նաև ՏՓԽ-ի անդամ բոլոր երկրները։

Արդյունաբերության մեջ կոոպերացման և մասնագիտացման ընդլայնումը XXV համագումարի կողմից դիտվեց որպես խոշոր խնդիր։ Հայտնի է, որ առ այսօր ՏՓԽ-ի անդամ երկրները ստորագրել են 30-ից ավելի բազմակողմ համաձայնագրեր՝ արտադրության կոոպերացման ու մասնագիտացման վերաբերյալ։ Այդ պայմանագրերը կնքվել են գյուղատնտեսական մեքենաների, ավտոմեքենաների թողարկման, էլեկտրոնային-հաշվիչ տեխնիկայի, քիմիական ինդուստրիայի սարքավորումների, շինարարական և ճանապարհային մեքենաների և այլ կարգի արտադրանքի թողարկման շուրջ։ Բազմակողմ պայմանագրերի կողքին մեծ տեղ են գրավում երկկողմանի համաձայնագրերը։

Նշելով ՏՓԽ-ի անդամ երկրների տնտեսական ու պլանային մարմինների, ինչպես նաև բուն ՏՓԽ-ի ժողովրդական տնտեսության պլանների կոորդինացման մարմինների կողմից կատարած շոշափելի աշխատանքը վերջին տարիների ընթացքում, ՏՓԽ-ի սեսիայի 29-րդ նստաշրջանը (1975 թ. հունիս) հանձնարարեց Խորհրդի անդամ երկրներին՝ մինչև 1975 թ. վերջը ապահովել 1976—1980 թթ. համար նախատեսվող ապրանքների փոխադարձ մատակարարման մասին երկարաժամկետ համաձայնագրերի ստորագրումը, ինչպես նաև արագացնել առաջին հերթին մեքենաների և սարքավորումների վերաբերյալ պայմանագրերի կնքումը։

Ինչպես մեկ անգամ ևս նշեց Խորհրդի սեսիայի 29-րդ նստաշրջանը, դնալով ավելի մեծ նշանակություն է ստանում ՏՓԽ-ի անդամ երկրների արդեն 1980 թ. հետո ընկած ժամանակաշրջանի համար հեռանկարային պահանջարկ-

---

8 Նույն տեղում, էջ 95։

9 «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունների մասին» ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինի զեկուցումը, «Սովետական Հայաստան», 2 մարտի, 1976։

ների բավարարումը՝ վառելանյութի, հումքի, մեքենաների և տեխնիկական սարքավորումների բնագավառում։ Դրա համար էլ արդեն 1976—1980 թթ. ժամանակահատվածում պահանջվում է մշակել կոնկրետ միջոցառումներ այն հաշվով, որ սկսած 1981 թ. իրականացվի մատակարարման ավելի բարձր աճ։

Համագործակցության երկարաժամկետ կոմպլեքսային միջոցառումների նախագծերի պատրաստման մասին ՏՓԽ-ի սեսիայի 29-րդ նստաշրջանի որոշումները վկայում են ժողովրդական տնտեսության կարդինալ պրոբլեմների կոմպլեքսային լուծման ընդհանուր կուրսի իսկությունը։

Սեսիայի հանձնարարությամբ այդ նախագծերը (որոք նախատեսում են մինչև 1990 թ. ՏՓԽ-ի անդամ երկրների պահանջարկների բավարարումը) պետք է պատրաստվեն և իրականացվեն ՏՓԽ-ի պլանային գործունեության բնագավառում համագործակցության կոմիտեի, համապատասխան հյուղային մշտական հանձնաժողովների և խորհրդի քարտուղարության համատեղ ուժերով։

Սոցիալիստական տնտեսական ինտեգրացիայի հետագա զարգացման ուղղությամբ իրականացվող միջոցառումների շարքում կարևոր տեղ է գրավում ՏՓԽ-ի սեսիայի 29-րդ նստաշրջանի կողմից հավանության արժանացած 1976—1980 թթ. բազմակողմ ինտեգրացիոն միջոցառումների համաձայնեցված պլանը։ Տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ երկրների համագործակցության շրջանակներում այդպիսի պլան պրակտիկայում մշակվել է առաջին անգամ։ Այն սոցիալիստական միջազգային հարաբերությունների պատմության մեջ առանձնահատուկ քաղաքական և տնտեսական նշանակություն ունեցող փաստաթուղթ է, որը կոչված է կյանքում իրականացնելու ՏՓԽ-ի անդամ երկրների ժողովրդական տնտեսության զարգացման և եղբայրական համագործակցության ուղղությամբ խոշորագույն համատեղ միջոցառում։

Այդ փաստը վկայում է, որ սոցիալիստական երկրների համագործակցությունը բարձրանում է նոր, ավելի բարձր մակարդակի, որ ՏՓԽ-ի անդամ երկրները թևակոխում են սոցիալիստական տնտեսական ինտեգրացիայի հետագա զարգացման ու համագործակցության կատարելագործման նոր էտապ։

Ինտեգրացիոն միջոցառումների համաձայնեցված հնգամյա պլանը ընդգրկում է առավել կարևոր միջոցառումներ՝ շուրջ 9 միլիարդ փոխանցվող ռուբլու արժողությամբ մի շարք օբյեկտների կառուցման, մեքենաշինության, քիմիական արդյունաբերության, գիտա-տեխնիկական համագործակցության և այլ ուղղություններով։ Համաձայնեցված պլանի հաջող իրականացման համար երաշխիք է ՏՓԽ-ի անդամ երկրների կողմից իրենց մեկամյա և հնգամյա ժողովրդա-տնտեսական պլաններում համապատասխան ռեսուրսների նախատեսումը՝ ստանձնած պարտավորությունները ժամանակին կատարելու համար։ Մյուս կարևոր երաշխիքն այն է, որ համագործակցության դժվարին պրոբլեմների լուծումն իրականացվում է ՏՓԽ-ի անդամ երկրների համախմբվածության և նպատակների միասնության պայմաններում՝ հաշվի առնելով ինչպես մեկ առանձին վերցրած սոցիալիստական պետության, այնպես էլ սոցիալիստական համագործակցության ամբողջական շահը։

ՏՓԽ-ի անդամ երկրների կողմից ներկա պայմաններում իրականացվող խոշոր միջոցառումներից է Օրենբուրգ—ՍՍՀՄ Արևմտյան սահման ձգվող մագիստրալային գազամուղի կառուցումը, որի լրիվ շահագործումը գլխավոր պայմանագրի մասնակիցներին լրացուցիչ կտա տարեկան 15,5 միլիարդ խմ

դաշ։ Օրենբուրգյան նախագիծը ժամանակակից պայմաններում համագործակցության կոմպլեքս բնույթի լավագույն նմուշն է։ ՏՓԽ-ի անդամ պետությունների միջև կոոպերացումն այստեղ սկսվում է կապիտալ ներդրումից. նախագծի իրականացման հետ կապված ծախսերի 50 տոկոսը իր վրա է վերցնում ՍՍՀՄ-ը, իսկ մնացած մասը, ապագա մատակարարման հաշվին, ներդնում են համաձայնագրի անդամ մյուս երկրները։

ՏՓԽ-ի սեսիայի 29-րդ նստաշրջանում ստորագրված մյուս կարևոր համաձայնագիրը վերաբերում է Նիկելի և կոբալտի արտադրության կոոպերացմանը Կուբայի Սոցիալիստական Հանրապետությունում։

Ինչպես նշվեց 29-րդ նստաշրջանում, սոցիալիստական երկրների էներգետիկ ռեսուրսների օրեցօր աճող պահանջների բավարարման գործում ատոմային էներգիայի պաշարների և բուն էներգիայի արտադրության հարցը սոցիալիստական տնտեսական ինտեգրացիայի կոմպլեքսային ծրագրում գրավում է առաջնակարգ տեղ։ Մասնագետների նախնական հաշիվներով ՏՓԽ-ի անդամ երկրների ատոմային էլեկտրակայանների ընդհանուր հզորությունը 1980 թ. կկազմի մոտավորապես 30 հազար մեգավատտ, իսկ 1990 թ. այն ավելանալու է ևս մի քանի անգամ և հասնելու է մոտ 160 հազ. մեգավատտի։ Ներկայումս ՍՍՀՄ-ը տեխնիկական օգնություն է ցույց տալիս Բուլղարիայում, Հունգարիայում, ԳԴՀ-ում, Լեհաստանում, Ռումինիայում և Չեխոսլովակիայում ատոմային էլեկտրակայանների կառուցման գործին։

Մի կողմից ՍՍՀՄ-ի, մյուս կողմից՝ Բուլղարիայի, Հունգարիայի, ԳԴՀ-ի, Լեհաստանի և Չեխոսլովակիայի միջև ստորագրված են երկկողմ համաձայնագրեր՝ ատոմային էլեկտրակայանների համար սարքավորումների արտադրության կոոպերացման ու համագործակցության վերաբերյալ։

Ատոմային էներգիայի արտադրության և վերջինիս զարգացման համար կարևոր դեր է պատկանում «Ինտերատոմէներգո» միջազգային միավորմանը։ Նրա նպատակն է աշխատանքի միջազգային բաժանման հիման վրա կազմակերպել ատոմային էլեկտրակայանների համար սարքավորումների և անհրաժեշտ այլ նյութերի արտադրությունն ու մատակարարումը, օգնություն ցույց տալ ատոմային կայանների նախագծմանը, շինարարության և շահագործման աշխատանքներին, լուրջ ուշադրություն դարձնել մասնագետ կադրերի արտադրատեխնիկական ուսումնառության գործին։

Քննարկելով ՏՓԽ-ի շահագրգռված անդամ պետությունների միասնական էլեկտրաէներգետիկ սիստեմի ստեղծման առաջարկը, ՏՓԽ-ի սեսիայի 29-րդ նստաշրջանը հանձնարարեց ՏՓԽ-ի գործադիր կոմիտեին և պլանային գործունեության բնագավառում ՏՓԽ-ի համագործակցության կոմիտեին՝ 30-րդ նստաշրջանի քննարկման համար նախապատրաստել միասնական սիստեմի գլխավոր սխեմայի նախագիծը։ Գլխավոր սխեմայի հաջող մշակումն ու ընդունումը էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման բնագավառում կհանդիսանա որակական նոր աստիճան սոցիալիստական տնտեսական ինտեգրացիայի զարգացման ճանապարհին։

Սեսիայի 29-րդ նստաշրջանը ընդունեց նաև մի քանի այլ կարևոր սկզբունքային որոշումներ ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերի ինտեգրացման պրոցեսների ամրապնդման ու զարգացման վերաբերյալ, որոնք վերաբերում են 1976—1980 թթ. հնգամյակին և հաջորդ տարիներին։ Այդ որոշումներն ու գլխավոր պայմանագրերը ամբողջությամբ վերցրած կազմում

են մեկ միասնական կուրս՝ ուղղված սոցիալիստական տնտեսական ինտեգրացիայի կոմպլեքսային ծրագրի իրականացմանը, որը կարևոր քայլ կլինի ՏՓԽ-ի անդամ երկրների ազգային էկոնոմիկաների աստիճանական մերձեցման ճանապարհին։ Այդ բազմաստիճան և բարդ պրոցեսի հաջողությունը պայմանավորված է սոցիալիստական երկրների բարեկամական, եղբայրական համագործակցության և պրոլետարական (սոցիալիստական) ինտերնացիոնալիզմի սկզբունքների հետևողական իրականացման հաջողություններով։ Ինչպես նշում է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը, «սոցիալիզմի երկրների հետ ունեցած հարաբերություններում ՍՄԿԿ-ն հաստատորեն հետևում է փորձված կանոնին՝ գործերը վարել իսկական իբավահավասարության և միմյանց հաջողությունների նկատմամբ շահագրգռվածության ոգով, որոշումները մշակել՝ հիշելով ոչ միայն ազգային, այլև ինտերնացիոնալ շահերի մասին»[10]։ Այդ ինտերնացիոնալ շահի գիտակցումն է, որ սոցիալիստական երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունները բազմակողմանիորեն նպաստում են սոցիալիստական ինտեգրացման պրոցեսի հետագա զարգացմանն ու ամրապնդմանը։ Նոր սխրանքների համար ոգևորիչ պլաններ են նախատեսված ՍՄԿԿ XXV համագումարին ներկայացված «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները» ՍՄԿԿ Կենտկոմի նախագծում։ Տնտեսական և կուլտուրական շինարարության ծավալուն պլաններ են մշակել Հունգարիայի սոցիալիստական բանվորական կուսակցության XI, Լեհաստանի միացյալ բանվորական կուսակցության VII, Կուբայի կոմունիստական կուսակցության I, Բուլղարիայի կոմունիստական կուսակցության XI, Չեխոսլովակիայի կոմունիստական կուսակցության XV համագումարները։ Հրատարակվել են Գերմանիայի սոցիալիստական միասնական կուսակցության նոր ծրագրի նախագիծը և ԳԴՀ ժողովրդական տնտեսության 1976—1980 թթ. զարգացման մասին ԳՍՄԿ IX համագումարի դիրեկտիվները։

«Մենք ամենքս,— նշեց Լ. Ի. Բրեժնևը Հունգարական սոցիալիստական բանվորական կուսակցության XI համագումարում,— վստահորեն մոտենում ենք այն արմատական նպատակների իրագործմանը, հանուն որոնց կոմունիստները աշխարհի վրա պարզեցին իրենց տեսության դրոշը, հանուն որոնց կատարվեցին ու կատարվում են սոցիալիստական հեղափոխություններ, աշխատում մեր երկրների ժողովուրդները»[11]։

Սոցիալիստական երկրների ինտերնացիոնալ շահերը պահանջում են նախ և առաջ սոցիալիզմի տնտեսական ու քաղաքական հզորության ամրապնդում, որի համար հսկայական դեր է պատկանում սոցիալիստական տնտեսական ինտեգրացիային։ Իսկ վերջինիս հաջող իրականացման համար բացառիկ է Տնտեսական փոխօգնության խորհրդի դերն ու նշանակությունը։

Ահա արդեն 27 տարի է, որ հաջողությամբ գործում և համաշխարհային լայն ճանաչում է ստանում Տնտեսական փոխօգնության խորհուրդը՝ սոցիալիստական համագործակցության երկրների միջազգային կազմակերպությունը, որի ստեղծումը սոցիալիզմի ծնունդ հանդիսացող նոր տիպի միջպետական տնտեսական հարաբերությունների ձևավորման օրինաչափ արդյունք է։

10 Լ. Ի. Բ ր ե ժ ն և, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 10։
11 «Սովետական Հայաստան», 19 մարտի, 1975։

ՏՓԽ-ի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված էր պատմականորեն ձևավորված քաղաքական ու տնտեսական վիճակով։

Կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ղեկավարությամբ ՏՓԽ-ի անդամ երկրներում պատմականորեն շատ կարճ ժամանակամիջոցում իրականացվեցին սոցիալ-տնտեսական արմատական վերափոխումներ։ ՏՓԽ-ի անդամ երկրների համագործակցությունը դարձավ աշխարհի ամենադինամիկ ինդուստրիալ շրջանը։ Չնայած ՏՓԽ-ի անդամ երկրների տերիտորիան կազմում է աշխարհի տերիտորիայի 18,5 տոկոսը, իսկ բնակչությունը՝ աշխարհի բնակչության 9,4 տոկոսը, այնուամենայնիվ, նրանց բաժին է ընկնում համաշխարհային արդյունաբերական արտադրանքի շուրջ 33 տոկոսը։ ՏՓԽ-ի անդամ երկրների համար բնորոշ է արտադրության ավելի արագ աճը տեխնիկական առաջադիմության տեսակետից առավել կարևոր ճյուղերում (մեքենաշինության, ռադիոէլեկտրոնիկայի, քիմիական արդյունաբերության և էներգետիկայի ասպարեզում)։ Էապես զարգացել է ՏՓԽ-ի անդամ երկրների միջև աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանումը. այդ մասին վկայում են փոխադարձ առևտրի աճի տեմպերը, որոնք գերազանցում են արդյունաբերության զարգացման տեմպերին։

Գնալով սաճում է ՏՓԽ-ի միջազգային հեղինակությունը։ Համագործակցության մարքս-լենինյան սկզբունքները և ՏՓԽ-ի անդամ երկրների էկոնոմիկայի զարգացման գործում նրանց հսկայական հաջողությունները ավելի ու ավելի են գրավում տարբեր երկրների ուշադրությունը դեպի ՏՓԽ-ի գործունեությունը։ 1973 թ. սոցիալիստական անդամ համաձայնագիր կնքվեց կապիտալիստական երկրի՝ Ֆինլանդիայի հետ ՏՓԽ-ի համագործակցության մասին։ 1975 թ. հուլիսին Մոսկվայում այդպիսի համաձայնագիր ստորագրվեց ՏՓԽ-ի և Իրաքի Հանրապետության, իսկ օգոստոսին՝ Մեքսիկայի Միացյալ Նահանգների միջև։

ՏՓԽ-ը պայմանագրային կապերի մեջ է մտնում նաև միջազգային կազմակերպությունների հետ։ 1975 թ. հունիսին համաձայնագիր ստորագրվեց Դանուբի հանձնաժողովի և ՏՓԽ-ի միջև։ Համագործակցության վերաբերյալ այդ համաձայնագիրը կարևոր քայլ է Դանուբի իրավական ռեժիմի հաջող իրականացման և դրա հետ կապված այլ պրոբլեմների կարգավորման ուղղությամբ։

ՏՓԽ-ի անդամ երկրները, ելնելով տարբեր սոցիալական կառուցվածք ունեցող պետությունների խաղաղ գոյակցության և սոցիալիստական երկրների միջազգային փոխհարաբերությունների կարգավորման սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքների պահանջներից, միջազգային ուրիշ կազմակերպությունների ու պետությունների հետ փոխշահավետ տնտեսական ու գիտատեխնիկական կապերը զարգացնում են ՄԱԿ-ի կանոնադրության, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի ընդունած՝ պետությունների տնտեսական իրավունքների և պարտականությունների խարտիայի դրույթներին համապատասխան։

ՏՓԽ-ի անդամ երկրների տնտեսական հաջող զարգացման, նրանց արտաքին տնտեսական կապերի ընդլայնման և սոցիալիստական տնտեսական ինտեգրացիայի պրոցեսի խորացման ընդհանուր ֆոնի վրա միջազգային ասպարեզում ավելի վառ գույներով է ընդգծվում ՏՓԽ-ի դերն ու նշանակությունը։ Դրա վառ ապացույցն էն, մասնավորապես, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեա-

յում Տնտեսական փոխօգնության խորհրդին դիտորդի ստատուս տալը, կարևորագույն միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ նրա կապերի ու համագործակցության ընդլայնումը և այլն։ Երկար տարիներ է, ինչ ՏՓԽ-ը մի շարք հարցերում սերտորեն կապված է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի հետ։ Այս երկու տնտեսական կազմակերպությունների համագործակցությունը ունի հետագա զարգացման մեծ հեռանկարներ։

Ձգտելով մեղմացնել միջազգային լարվածությունը և ամրապնդել պետությունների միջև համագործակցությունը, ՏՓԽ-ը և նրա անդամ երկրները նախաձեռնություն ցուցաբերեցին Եվրոպական տնտեսական միավորման հետ կոնտակտներ հաստատելու համար բանակցություններ վարելու գործում։ 1976 թ. փետրվարի 16-ին ՏՓԽ-ի գործադիր կոմիտեի նախագահը Եվրոպական միավորումների խորհրդի նախագահին հանձնեց Տնտեսական փոխօգնության խորհրդի նամակը՝ հասցեագրված Եվրոպայի տնտեսական միավորմանը։ ՏՓԽ-ի անդամ բոլոր երկրների կառավարությունների և ՏՓԽ-ի հանձնարարությամբ առաջարկվեց, մի կողմից, ՏՓԽ-ի անդամ երկրների և ՏՓԽ-ի, մյուս կողմից՝ Եվրոպայի տնտեսական միավորման անդամ երկրների և միավորման միջև համաձայնագիր կնքել՝ Տնտեսական փոխօգնության խորհրդի և Եվրոպայի տնտեսական միավորման փոխհարաբերությունների հիմունքների մասին։ ՏՓԽ-ի անդամ երկրների և ՏՓԽ-ի կողմից Եվրոպական տնտեսական միավորմանը հանձնվեց նաև առաջարկվող պայմանագրի նախագիծը։

ՍՄԿԿ XXV համագումարում Լ. Ի. Բրեժնևը, խոսելով այդ կարևոր նախաձեռնության մասին, մասնավորապես նշեց. «Գործելով Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցության եզրափակիչ ակտի ոգով, Տնտեսական փոխօգնության խորհուրդը ՏՓԽ-ի անդամ երկրների կառավարությունների անունից Եվրոպական տնտեսական միավորմանը առաջարկել է պաշտոնական հարաբերություններ հաստատել։ Եվրոպական տնտեսական միավորման մինիստրական խորհրդին է հանձնվել փոխհարաբերությունների հիմունքների վերաբերյալ համաձայնագրի նախագիծ, որով նախատեսված է նպաստավոր պայմաններ ստեղծել երկու կազմակերպությունների և նրանց մեջ մտնող երկրների իրավահավասար համագործակցության համար։ Մենք պատրաստ ենք դրան»[12]։ Դա նշանակում է, որ սոցիալիստական երկրների տնտեսական համագործակցությունը ավելի մեծ խնդիրներ պետք է լուծի, որ նրա միջազգային հեղինակության բարձրացման հետ միաժամանակ աճեցու են նրա դերն ու նշանակությունը համաշխարհային սոցիալիստական սիստեմի հետագա իրացման գործում։

Սոցիալիստական երկրների և նրանց միջև գործող միջազգային կազմակերպությունների՝ ՏՓԽ-ի և Վարշավայի պայմանագրի կազմակերպության դերի և նշանակության բարձրացումը համաշխարհային մասշտաբով մեկ անգամ ևս վկայում է կոմունիստական հասարակարգի համամարդկային միսիայի իրականացման անխուսափելիությունը։

Սոցիալիզմի համաշխարհային դերի և նշանակության բարձրացումը պայմանավորված է ոչ միայն սոցիալիստական համագործակցության երկրներում համամարդկային իդեաների իրականացմամբ, այլև նրանով, որ այդ իդեաները ռեալ ձևով ներգործում են ամբողջ աշխարհում դասակարգային

---

12 Լ. Ի. Բրեժնև. ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 95։

պայքարի ճիշտ ստրատեգիայի մշակման գործի վրա և նպաստում բանվոր դասակարգի ու ողջ աշխատավորության հեղափոխական մտքի հասունացմանը։

Շնորհիվ այն բանի, որ սոցիալիզմի համաշխարհային սիստեմը սեփական նյութատեխնիկական բազայի միջոցով տնտեսական ու հասարակական կյանքի աննախընթաց վերելք է ապրում, որ գործնականում ապացուցում է իր առավելությունն ու ճշմարտացիությունը, երկրագնդի աշխատավոր մասսաները ամենայն վճռականությամբ հակվում են դեպի սոցիալիզմի համաշխարհային հաղթանակի անխուսափելիությունը։ Ողջ մարդկության և առաջին հերթին աշխատավոր մասսաների խղճի ու մտքի վրա անխուսափելիորեն ներգործում են սոցիալիզմի տնտեսական հաջողություններն ու նվաճումները։ Եվ դա այն պարզ պատճառով, որ տնտեսական ու հասարակական կյանքի բոլոր նվաճումները սոցիալիզմը ի սպաս է դնում, նախ և առաջ, ի բարօրություն մարդու և մարդկության, որ նրա ամբողջ գործունեությունը նպատակամղված է աշխատավոր մարդու երջանիկ կյանքի, անհատականության բաղմակողմանի զարգացման ու ընդունակությունների անկաշկանդ դրսևորման ապահովմանը։ «Մենք դեռ չենք հասել կոմունիզմին,— ասել է Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXV համագումարում,— բայց ամբողջ աշխարհն է տեսնում, որ մեր կուսակցության գործունեությունը, նրա ձգտումները նպատակամղված են այն բանին, որ հնարավոր ամեն ինչ արվի մարդու բարօրության համար, հանուն մարդու»[13]։

Սոցիալիզմի տնտեսական նվաճումների և էկոնոմիկայի բնագավառում ձեռք բերած հաջողությունների պատմական անհրաժեշտությունն ու միջազգային նշանակությունը կարելի է ճիշտ հասկանալ և գնահատել ժամանակակից աշխարհում երկու սիստեմների՝ սոցիալիզմի ու կապիտալիզմի մրցակցության, խաղաղ պայքարի ընդհանուր ֆոնի վրա միայն։

---

13 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 145։